ԱՄՓՈՓՈՒՄ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

2023 թվականի ընթացքում Դատավորների ընդհանուր ժողովի Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից կայացվել է դատավորի գործունեության գնահատում իրականացնելու (գործընթացն սկսելու) մասին 36 որոշում, որոնցից գնահատման արդյունքներով հաստատվել է 29 որոշման նախագիծ, կայացվել՝ 27 վերջնական որոշում, իսկ 9 դատավորի գործունեության գնահատման գործընթացը դեռևս չի ավարտվել:

Նշված ժամանակահատվածում 36 դատավորից 13 դատավորի գործունեության գնահատումն իրականացվել է Բարձրագույն դատական խորհրդի 2020 թվականի օգոստոսի 20-ի թիվ ԲԴԽ-55-Ո-123 որոշմամբ սահմանված ժամանակացույցին համապատասխան, իսկ 23 դատավորի գործունեության գնահատման համար հիմք է հանդիսացել վերջիններիս գործունեությունն արտահերթ գնահատելու դիմումները:

2023 թվականի ընթացքում դատավորների գործունեության գնահատման գործընթացն իրականացնելու նպատակով Հանձնաժողովը սահմանված կարգով Դատական դեպարտամենտից պահանջել, ստացել և իրականացրել է շուրջ 360 դատական գործի ուսումնասիրություն, ամփոփել՝ գնահատվող դատավորների կայացրած դատական ակտերի, բողոքարկված և բեկանված դատական ակտերի, գնահատվող դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումների, այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ գնահատվող դատավորի դրսևորած վերաբերմունքի, դատավորի կողմից իրականացված գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի վերաբերյալ տեղեկությունները:

Իրականացված գնահատումների քանակը	**Հաստատված նախագծերի քանակը**	**Վերջնական որոշումների քանակը**	**Չավարտված գնահատումների քանակը**	**Գնահատումների քանակն ըստ ժամանակացույցի**	**Արտահերթ գնահատումների քանակը**
36	29	27	9	13	23